

Կանխագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ


ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅԱՌԱԿԱՆԱՅ

ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Քր 49.

ՏՊԱԳՐԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՀԱՆՐԱՓԻՏՏԱԿ

ՀԱՆԴԵՍ هازاكيڊاق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 49 || 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1903

“ՀԱՆՐԱՓԻՏՏԱԿ” Ի

1904 ՏԱՐԻՆ

Մեր ձեռնարկած գործին կատարելութեանը նախանձախնդիր, միշտ կը ջանանք ա'լ աւելի ճոխացնել ու սիրելի ընել Հանրագիտակը:

Բոլորած երկու տարուան չըջանին մէջ գտած ընդունելութիւնը, բոլոր հայ վարժարաններու մէջ մուտ գտնելը, գրաւական մ'են անոր յաջողութեան: Զանալով միշտ դէպի լաւին ու կատարելին ձգտիլ, գալ տարուան համար պատրաստած ենք ծրագիր մը որ կը գերազանցէ իր նախորդներն: Հոս կ'արժէ որ այդ մասին քանի մը բացատրութիւններ տանք:

Մեր նպատակն է կազմել պատանին նկարագիրը, ճոխացնել անոր միտքն ամէն տեսակ ծանօթութիւններով և զայն մարդ մը ըլլալու ճամբուն մէջ դնել: Դպրոցին մէջ դասագրքերը չեն կըրնար ամէն բան ընել: Մեծ պակաս մ'ունին, զորս լեցնողն Հանրագիտակ եւ անոր նմաններն են: Զբաւէր միայն տղուն ուղեղը ծանրաբեռնել քիչ կամ չատ անկապ ծանօթութիւններով, հոգի մ'ունի տղան, պէտք է առաջ այդ հոգալ. հոգեկան վիճակին կարեւորութեանը պէտք է ամէնէն աւելի խնամք տանիլ. այդ դերն է որ Հանրագիտակ իր կարողութեան հասած չափովը ստանձնել կը ճգնի:

ԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ մեծ տեղ մը պիտի ունենայ գալ տարի Հանրագիտակի մէջ, ամէն նոր գիւտ կամ գիտական հետաքրքր-

րաչարժ հարցեր պիտի հրատարակուին դիւրահասկնալի բացատրութիւններով, որոնց պիտի ընկերանան պատկերներ ալ: Միշտ անպակաս պիտի ընենք Գիտական վեպերը, սկզբունքներու, շահեկան մեքենաներու ու գործիքներու բացատրութիւնները: Նոյնպէս մէն մի թիւ՝ պիտի ունենայ գիտական զուարճալի զրօսանքներ, տղայոց դպրոցական խաղեր, գիտական հարցումներ եւայլն:

ԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆԻ համար խնամով պիտի զատենք այժմէութիւն ունեցող հարցեր՝ օտար եւ տոհմային անուններով ստորագրուած: Հանդէսիս Արտօնատէր-Խմբագրապետ Մեծ. Արմէն էֆ. Լուսինեան պիտի չարունակէ իր Համառօտ Գրագիտութեան դասերն, եւ անոր աւարտումէն վերջ պիտի շարունակուի Հոգեբանութեան Դասերը:

Հանրագիտակի ամէն թիւի եցկու կամ աւելի երեսները պիտի յատկացնենք սկսնակ գրողներու, որոց բանաստեղծական ու գրադիտական արտադրութիւններն՝ ըլլայ թարգմանութիւն կամ ինքնագիր, ընտրանօք պիտի հրատարակուին:

ՄՐՑՈՒՄՆԵՐԸ՝ զոր այս տարի, հակառակ մեր բաղձանքին ու կամքին՝ չկարողացանք կանոնաւոր կերպով շարունակել, կը յուսանք թէ՛ գալ տարի ա՛լ աւելի կատարեալ ճամբու մը մէջ կը կը դնենք, եւ պիտի ջանանք նորանոր մրցումի տեսակներ ստեղծել, ըլլայ գրական, գիտական կամ հաշուական:

Ամէն թիւի մէջ անպակաս պիտի ընենք մանկական հետաքրքրաշարժ ու բարոյական պատմութիւններ, աւանդավէպեր, ճամբորդութեան արկածներ: Մտադիր ենք թարգմանել Ժիւլ Վէրնի վերջի երկերէն մին՝ « 19րդ դարու նշանաւոր երկրախոյզներ »:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆԻ համար Մեծ. Մ. էֆ. Ս. Որբերեան, պատրաստած ու յղած է մեզ՝ Ժ. Ժ. Ռուսոյի Էմիլին ամփոփումը, գնահատուած եւ օգտակար երկ մը, զոր մաս առ մաս պիտի հրատարակենք:

Շատ տեղերէ, մանաւանդ գաւառներէ, շարունակ դպրոցական հանդէսներու համար մանկական Տրամախօսութիւններ կը խնդրուի, այդպիսի հրատարակութիւններ պատրաստ չգտնուելուն՝ Հանրագիտակի մէջ մի քանի հատ հրատարակեցինք. այժմ պատրաստ ունինք երկու հատ, մին թարգմանութիւն եւ պատկերազարդ, « Ճաննը քացախով չբռնուիր », իսկ միւսը՝ հեղինակութիւն՝ « Խաւիժ » վերնագրով. հետզհետէ պիտի հրատարակուին: Սոյն երկու տրամախօսութիւնները բոլորովին բարոյական ըլլալով հանդերձ՝ խիստ ծիծաղաշարժ ալ են:

Գալ տարուան մեր ամէնէ մեծ չաջողութիւնը պիտի ըլլայ՝

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԲԱՍՏԵՐՈՒ ԲԱՅՍՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

որ ամէն շարժու պիտի հրապարակուի Հանրագիտակի մէջ: Այդ մասին ընդարձակօրէն պիտի խօսինք յաջորդ թիւով:

Հանրագիտակի յաջորդ տարւոյ մէջ ունենալիք ուղղութիւնն ու ընթացք համառօտակի բացատրելէ յետոյ, կուգանք մեր մէկ աւելի կարեւոր և նուիրական պարտականութիւնը կատարել և ուր-տագին շնորհակալութիւննիս յայտնել Մեծ. Գործակալներնուս, և Ազնիւ Ընթերցողներնուս:

Չպիտի կրնանք քանի մը տողով յայտնել մեր անհուն երա-տագիտութիւնն այն ազնիւ Բարեկամներնուս, որ Հանրագիտակի երկու տարեշրջանին մէջ ալ՝ ամէն ջանք չխնայեցին տարածելու հանդէսս, եւ միանգամայն իրենց գրական ու բարոյական օժան-դակութիւնը նուիրեցին: Կը յուսանք թէ՛ յաջորդ տարին Հան-րագիտակ սոյն տեսակէտերով նոյնքան բարերախտ գտնուի:

ՄԱՅՐԱԿԱՆ ԱՒԵՐ

Անհուճութիւն է սերն մայրական
Ու աղբիւրն է սիրոյն օրդիական.
Մայքն համակերպի բաղդին անողոք
Առանց բառնալու խնդիր կամ բողոք.
Եւ ո՞վ կ'անգոսնէ պաշօն մայրական
Ոչմէ կը բղխին, գուք, սէր անսանման:
Յուսոյ նշոյլներ, սփռէ բնանեաց
Սփոփելու յար, յամենայն վեցաց.
Անգուգակեի՞ն է վիշտ մայրական
Ետք օրդին դիմէ անողոք մահուան,
Նա կը հառաչէ, թէ աւա՞ղ գնաց,
Նա եղաւ զոհն, քաղծութեան կեցաց.
Թէ ինչո՞ւ եղծեց, ժանճ ձեռքն մահուան
Որուն իւր յոյսեր գտան ապաստան.

Անագորոյն նեժ , անողո՛ մահուան ,
 Խոցոսել կուտան զսիւս մայրական .
 Ո՛ր լինի սպեղանի այն մօրկան ,
 Ո՛ր ամոքե վիշտն երեմական ,
 Ու ո՛ր կարող , սիրովել սիրոն մայրական ,
 Որուն վիշտ ու սէր են անսահման :
 Այսպէս է սէր , ու սիրոն մայրական
 Որ ցմահ իւր որդւոցմէն է անբաժան :

Սափսոն

ՄԻՀՐԱՆ Յ. ԻԳԻԼԻԿԵԱՆ

Ո՛Վ ՀՆԱՐԵՑ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

ՆՈՒԷՐ՝ ՔՐՈՁՄ՝ ՀՌԻՓՍԻՄԷԻՆ

(Շարունակութիւն 48րդ Թիւէն եւ վերջ)

Իսկ Սթէֆէնսոն մի անգամ հրաման ստանալուն՝ սկսաւ փոփոխել իր շոգեկառքը : Ջրի կաթսայի մէջէն խողովակ մը անցուց , ուրկից կրակ կ'անցնէր , ասկից՝ ջուրը աւելի շատ կը տաքնար , շոգի աւելի շատ կը լինէր եւ շոգեկառքը աւելի ուժ կը ստանար : Միեւնոյն ժամանակ ձուլածոյ գծերու տեղ նա մտածեց դնել երկաթէ գծեր , ինչպէս որ է հիմայ , վերջապէս , 1825 թուին սեպտեմբերի 25ին առաջին կառախումբը շինուեցաւ եւ ժողովրդեան մեծ խումբեր հաւաքուեցան նայելու այդ նոր մեքենային , որ հրաշք մը կը թուէր իրենց : Կը զարմանային եւ չէին կարող հասկնալ թէ ինչպէս աչքի առջեւ կը տեսնեն այն , ինչ որ առաջ միայն հէքեաթներու մէջ կը պատմուէր : Հիմա ոչ թէ հէքեաթի մէջ այլ իսկապէս շոգեկառքը քաշեց բերաւ մի քանի վակոն ծանր բեռցուած քարածուխով եւ Սթէֆէնսոն ուրախ էր , որ իր աշխատանքն ու ուսմունքը պէտք եղածին պէս ծառայեցին :

Առաջին երկաթուղի շինելուն , կը խորհէին միայն քարածուխի փոխադրութեանը մասին , որ Անգլիոյ մէջ շատ կը գործածուէր գործարաններու մէջ իբր վառելիք . իսկ մարդոց համար միայն մէկ վակոն կը նշանակէին : Բայց մարդիկ շուտով հասկըցան թէ երկաթուղիով ճանապարհորդելը շատ աւելի յարմար է քան թէ ձիով եւ ցանկացողներ այնչափ հաւաքուեցան , որ զատ

կառախումբ պէտք էր նշանակել ճանապարհորդներու համար: Ի՞նչ ժամանակէն ածուխ բեռցուած տեղը սկսան հաւաքուիլ վաճառականներ, արհեստաւորներ, երկաթուղւոյ վրայ ծառայողներ եւ քանի մը տարիէն ամբողջ փոքր քաղաք մը շինեցին այնտեղ ուր առաջ կանանչ դաշտ էր:

Առաջին երկաթուղին շինուելէ չորս տարի ետքը խորհեցան ուրիշ մ'ալ շինել Լիվրբուլէն մինչեւ Մանչէսթր:

Լիվրբուլ մեծ ու շատ հարուստ քաղաք մ'է Անգլիայի մէջ, ուր շատ ապրանքներ կը բերեն ուրիշ երկիրներէ, մանաւանդ բամպակ:

Իսկ Մանչէսթրի մէջ մեծ գործարաններ կան, որ ուրիշ տեղէ բերուած բամպակէն չիթ, կտաւ եւ ուրիշ բամպակեղէն կտաւներ կը պատրաստեն: Բայց որովհետեւ այս երկու յիշուած քաղաքներու, Մանչէսթրի եւ Լիվրբուլի ճանապարհները գէշ էին, բամպակը շատ անգամ կ'ուշանար մի քանի շաբաթ եւ այսպէս շատ ժամանակ գործարանատէրերը մեծ վնասներ կը կրէին, իսկ աշխատաւորները անգործ մնալով շատ խեղճութեան կը մատնուէին:

Այսպէս, թէ գործարանատէրերու եւ թէ աշխատաւորներու համար եղած մեծ անյարմարութիւններու առաջն առնելու համար որոշեցին շարունակել երկաթուղին եւ Սթեֆէնսոնէն խնդրեցին շինել այդ ճամբան, ինչ որ Սթեֆէնսոնին շատ դժուար եղաւ ինչպէս պիտի տեսնենք հիմա:

Այն տեղի գեղացիները, ուր տեղէն որ կ'ուզէին գիծը անցընել, երեւակայեցին թէ երկաթուղին կը խլէ իրենց ձեռքէն գործը, եւ ոչ միայն կր խանգարէին Սթեֆէնսոնի ամէն քայլը, այլ նոյն իսկ կ'ուզէին սպաննել, այնպէս որ այս յոգնիլ չգիտցող աշխատողը ստիպուած էր գիշերները քննել տեղերը եւ յատակագիծեր հանել:

Վերջապէս յատակագիծերը պատրաստուած էին, տեղը որոշուած եւ իշխանութենէն հրաման ստացուած էր: Սթեֆէնսոն գլխաւոր կարգադրիչ նշանակուած էր եւ շուտ մը գործի սկսաւ, թէեւ այստեղ ալ ուրիշ տեսակ անյաջողութիւններ հանդիպեցան:

Ճանապարհի մեծ մասը պէտք է անցնէր ճահճային տեղերէ, ուր շատ դժուար էր հաստատելը, բայց Սթեֆէնսոն մտածեց ամբողջ ճահճի երկայնութեան փայտէ նաւակներ դնել, վրան տախտակ ծածկել ու վրան ալ հաստ խաւ մը չոր հող լեցնել, ու գուղճով ամրացնել: Մեծ աշխատանքէ վերջ այս ալ շինուեցաւ:

ու ճահճի մէջէն անցած ճանապարհը բոլորովին անվտանգ էր։ Բայց այստեղ ալ Սթեֆէնսոն թշնամիներ ունեցաւ, որոնք սկսան աշխատիլ հաստատելու թէ անոր շինած շոգեկառքը բանի մը պէտք չէ։ Թէ քամին դէմ չափտի երթայ կամ շատ ծանր պիտի երթայ, վերջապէս ամէն մէկը գէշ բան մը կ'աւելցնէր։

Այն ատեն ճանապարհի կառավարիչները այս վէճերուն վերջ դնելու համար յայտարարեցին, թէ ո՛վ որ կ'ուզէ, կարող է իր շոգեկառքը ներկայացնել փորձի համար իր² նոր յարմարցուած ձեւերովը եւ 350 ոսկի նշանակեցին անոր, որ որոշեալ ժամանակին ներկայացնէ շոգեկառք մը, որ ժամուան մէջ 15 մղոն (20 վերստ) կարողանայ անցնիլ։ Բոլոր իրենց շոգեկառքերը ներկայացնել ուզողները հինգ հոգի էին եւ Սթեֆէնսոնը դարձեալ ձեռք զարկաւ իր մեքենան լաւացնելու։ Իրեն հետ կ'աշխատէր իր որդին որ այդ ատեն արդէն աւարտած ուսումը եւ շատ լաւ մեքենագէտ մը եղած էր։

Առաջուան մէկ խողովակով կաթսային տեղ Սթեֆէնսոնը շինեց կաթսայ մը, մէջը շատ խողովակներով, որոնց մէջէն կրակը կ'անցնէր. ասկէ շոգին ալ աւելի շատցաւ եւ շոգեկառքը ահագին ուժ ստացաւ։

Երբոր փորձի օրը եկաւ, տեսան որ Սթեֆէնսոնի շոգեկառքը ամէնէն լաւն է, եւ ժամուան մէջ կարող էր անցնիլ ոչ թէ 15 մղոն, այլ նոյն իսկ 45 մղոն։ Սթեֆէնսոնի հակառակորդները այս բանը տեսնելով ստիպուած էին տեղի տալ, իսկ միւսները կը գովէին ու կը շնորհաւորէին զինքը։

Շոգեկառքը աւելի կատարեւագործելէ յետոյ Սթեֆէնսոն սկսաւ մտածել, ի՞նչպէս պէտք է աւելի լաւ շինել վալոնները, կառախումբը կեցնելու համար անուարգել հնարեց եւ անիւները դիւրին իւղելու համար միջոց մտածեց։

Լիվրբուլի ճանապարհը՝ շինելէ վերջ, սկսան այդպիսի ճանապարհների շինել ուրիշ տեղեր՝ հարիւրաւոր ու հազարաւոր մղոն երկարութեամբ, եւ չէր շինուեր ճանապարհ մը. որու նախկին հանքագործը ջմասնակցէր խօսքով, խորհրդով եւ կամ գործով։

Սթեֆէնսոն յարգուեցաւ ո՛չ միայն իր հայրենիքի՝ Անգլիայի մէջ, այլ եւ որիչ երկիրներու մէջ։ Իր ըրած ծառայութիւններու համար չքանչափներ ու մրցանակներ ստացաւ, եւ այնպէս փառք ու հարստութիւն վասակեցաւ, որ շատ քիչերը ունին, եւ այս ամէն բանին հասաւ նա իր խելքովն ու անխոնջ աշխատանքովը։

Թէեւ Սթեֆէնսոն երիտասարդութեան ժամանակ ամէն տե-

տակ զրկտնք տեսաւ, բայց ստակի մոլին չդարձաւ եւ փառաւոր ապրելու վրայ բնաւ չխորհեցաւ:


Մինչեւ իր մահը կը շարունակէր աշխատիլ, իսկ իբր հանգիստ ծաղիկներ կը մշակէր ու թռչուններ կը խնամէր. ասոնցմէ զատ միշտ կ'օգնէր խեղճերուն, դպրոցներ կ'ընէր, գրադարաններ կը բանար, ուրկէ ամէն մարդ կարող էր կարդալու գրքեր առնել:

Սթեֆէնսոն մեռաւ 1848 թուականին, այսինքն ասկէ 55 տարի անաջ, բայց մեռնելէն վերջ ալ չմոռցուեցաւ:

Երկաթուղիները տարուէ տարի կը շատնան, երկաթուղիով կը ճամբորդեն թէ՛ մեծ, թէ՛ պզտիկ, թէ՛ հարուստ եւ թէ՛ աղքատ ու ամէն մէկը կ'օրհնէ ինքնօգնութեամբ յառաջ գացած հանքա-գործն, որ ամէնուն համար ճամբորդելու այդպիսի հանգիստ ու արագ միջոց ստեղծեց:

Թարգմ. Ռուսեր. ԱՐԴՈՒԱՐԴ ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ

Վ Ե Ր Զ



ՄԵՌԷՆ ՄԵՌԸ

Ատենօք մարդ մը կար որ մեծ դժուարութեամբ կ'ապրեցնէր իր կինը և երկու զաւակները: Օր մը, ըստ սովորութեան, երբ անտառ կ'երթար իրեն էջովը միասին փայտ ժողվելու, սաստիկ ցուրտէն չկրնալով աշխատիլ, գնաց ծառի մը տակ նստաւ ու սկսաւ տղու մը պէս լալ:

— Ո՛հ, որքան տաժանելի է իմ կեանքս, որքան պիտի ուզէի որ Աստուած հոգիս առնէր:

Երբ նա այսպէս իր դժբախտութեան վրայ կ'ողբար, ձայն մը լսեց որ իրեն անունը կուտար. չորս կողմը նայեցաւ եւ ո՛չ ոք տեսաւ:

— Ո՞վ է որ զիս կը կանչէ, ըսաւ նա դողդղալով:

— Ե՛ս եմ, Մէռլէնը(*), ըսաւ ձայն մը որ անտառէն կուգար:

(*) Մէռլէն՝ Կեղտական աստուածային անձնաւորութիւն մըն է, որ կը տեսնուի միջին դարու պատմութիւններու մէջ, երկու տարբեր վիճակներով, երբեմն զեւ մը կամ վհուկ մը, որ կը տեսնուի մարդոց, երբեմն ալ բաղդին աստուածն է, ինչպէս այս պատմութեան մէջ որ անտառէն կ'ըլլէ ժամանակ առ ժամանակ:

— Ահ, որքա՛ն տաժանելի է իմ կեանքս, ո՛րքան գոհ կ'ըլլայի եթէ Աստուած հոգիս առնէր:

Երբ նա այսպէս իր դժբախտութեանը վրայ կ'ողբար, ծայն մը լսեց որ իրեն անունը կուտար. չորս կողմը նայեցաւ եւ ո՛չ ոք տեսաւ:

— Ո՞վ է որ զիս կրկանչէ, ըսաւ նա դողդղալով:

— Ե՛ս եմ, Մէռլէնը եւ կ'ուզեմ՝ բարիք մը ընել քեզի: Հա՛րուստ պիտի ըլլաս, մնացեալ օրերդ երջանիկ անցնելու համար, պայմանաւ որ, ապերախտ չպիտի գտնուիս ինծի հանդէպ, եւ միշտ պիտի յիշես թէ առաջ աղքատ մ'էիր, եւ պիտի գթաս թշուառներուն վրայ: Տունդ գնա՛: Պարտէզիդ ծայրը գտնուող խնձորենիին տակը պեղելով ահագին գանձ մը պիտի գտնես. լաւ գործածէ՛ զայն եւ մի՛ մոռնար ամէն տարի այս ժամանակ հոս գալ եւ զիս տեսնել:

Ագահը տուն վերադարձաւ առանց փայտ մը հաւաքելու:

Երբ կինը տեսաւ որ առանց փայտի տուն կուգար, լաւ ընդունելութիւն չըրաւ անոր:

— Դատարկապո՛րտ, թշուառակա՛ն, ըսաւ անոր, ինչո՞վ պիտի ապրինք:

— Հանդարտէ, կնի՛կ, քիչ մը համբերութիւն, եւ ալ վիշտ չպիտի ունենանք: Ու անոր պատմեց ի՛նչ որ պատահեցաւ իրեն անտառին մէջ:

Մէյմէկ բրիչ առնելով, ծառին տակը փորեցին եւ ահագին գանձ մը գտան, որ անմիջապէս տուն փոխադրեցին:

Այնուհետեւ կամաց կամաց սկսան իրենց ապրելու կերպը փոխել: Կասկածի տեղի չտալու համար կծծին, ի սկզբան շարունակեց ամէն առտու անտառ երթալ, յետոյ շարաթն անգամ մի, ամիսը երկու անգամ, վերջապէս ալ բոլորովին դադրեցաւ: Ծառենց իրեն իշուկը եւ քաղաքացիի մը կեանքը սկսաւ վարել: Քաղաքին մէջ գեղեցիկ պարտէզով տուն մը գնեց: Անմիջապէս բարեկամներով եւ անծանօթ ազգականներով շրջապատուեցաւ: Այժմ երջանիկ էին, թշուառները չէր խորհէր բնաւ:

Ամէն տարի, սակայն, չէր դադրեր անտառն երթալու եւ իրեն յաջողութեան հաշիւը տալ Մէռլէնին:

— Տէ՛ր Մէռլէն, շնորհակալ եմ, կ'ըսէր նա. հարուստ եւ երջանիկ եմ:

— Լա՛ւ, կը պատասխանէր ծայնը, միայն թէ յիշէ պատուէրներս:

Օր մը անտառ երթալով, իրեն բարերարն օգնութեան կանչեց:

— Տէ՛ր Մեռէն, քենէ քան մը պիտի խնդրեմ, կ'ուզեմ քաղաքին թաղապետ-դատաւորն ըլլալ:

— Գնա՛, ամսէ մը պիտի ըլլաս, ըսաւ ձայնը, բայց մի՛ մոռնար աղքատներն ու կարօտեալները:

Արդարեւ, ամիսէ մը վերջը, թաղապետ անուանեցաւ. հարուստներու եւ պատուաւորներու յարգտնացն արժանացաւ, աղքատներն ու թշուառները վռնտեց:

Միշտ այսպէս է արդէն, այն որ ստորին աստիճանէ կը բարձրանայ, ամէնէն քարասիրտը կ'ըլլայ:

Ժամանակէ ժը վերջ իրեն անտառն այցելելու ատենը հասաւ, անտառին մէջ մտնելով, իրեն սովորական տեղը գնաց:

— Մեռէն՛ն, պօռաց նա, ըսելիք ունիմ քեզի:

— Ի՞նչ կայ, ըսաւ ձայնը, նորէն վիճակէդ գոհ չե՞ս:

— Զաւակս ուսումնական եւ լատիներէն շատ մը գիրքեր կարդացած է, հիմա քսանը հինգ տարեկան է, կ'ուզեմ որ քաղաքին եպիսկոպոսն ըլլայ, յաջորդն անոր՝ որ քանի մը օրէն պիտի մեռնի:

Աղջիկս ալ ամուսնանալու տարիքն հասած է, կ'ուզեմ քաղաքին ամենէն հարուստին տղուն հետ ամուսնացնել, որ էն շատ օժիտ տուողներէն է:

— Շատ լաւ, կ'ընդունիմ՝ երկու առաջարկդ ալ, բայց մտածէ:

Մեկնեցաւ առանց ուրիշ բան ուզելու:

Քանի մը օրէն տղան եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և քաղաքին ամէնէն հարուստին տղան իր աղջկան ձեռքը խնդրելու ելաւ: Այս երկու բերկրառիթ հանդէսներու համար ճոխ խնջոյքներ պատրաստեցին: Անոր հարստութիւնը օր ըստ օրէ կ'աւելնար: Օր մը ըսաւ իր կնոջ:

— Վաղն անտառ երթալու սովորական օրն է, պէտք է անտառը երթալ և Մեռէնը գտնել, ստուգիւ ձանձրանալի բան, պարզապէս յիմարութիւն է: այլեւս Մեռէնին պէտք չունիմ, պարապ տեղը յոգնիլ չէ՞:

— Ո՛չ, ըսաւ կինը, այս անգամ ա՛լ գնա եւ ըսէ որ այս վերջինն է ու ալ մի՛ երթար:

Հետեւեալ օրը իրեն ամէնէն շքեղ հագուստները հագնելով եւ ուրիշ մարդոց հետ միասին անտառին կողմը ուղղուեցաւ, մինակը գնաց իր սովորական տեղը եւ գոչեց:

— Է՛հ, Մէրլօ՛, քեզի կ'սպասեմ կոր, շուտ եկո՛ւր, ժամանակ չունիմ:

Ծառերու գագաթէն ձայնը պատասխանեց:

— Ի՞նչ կ'ուզես ինձմէ, ձիդ զիս պիտի կոխտէր, ինչո՞ւ զգուշութեամբ չես յառաջանար:

— Հրաժեշտ առնելու համար եկայ հոս. այլ եւս չեմ կրնար այնքան հեռու տեղերէ մինչեւ հոս գալ. պէտք չունիմ քեզի մնաս բարեա՛ւ:

— Ա՛հ, ագա՛հ, անպիտան արարած, ըսաւ ձայնը ծառերու մէջէն, երբ աղքատ էիր՝ նեղութիւն չէիր զգար ամէն օր մինչեւ հոս գալ ու ձիւդեր ժողվել օրապահիկ հացդ ճարելու համար: Բարութիւններս գէշ գործածեցիր. ի սկզբան «Տէր Մեռլէն» կոչեցիր զիս, յետոյ «Մեռլէն» և վերջապէս «Մէռլօ»: պատիժդ պիտի գտնես, որովհետեւ ապերախտ եղար թէ ինձի եւ ուրիշներու հանդէպ, մոռցար առաջուան վիճակդ՝ թէ աղքատ մէկն էիր. կորսուէ՛ գնա, բայց գիտցիր որ պիտի իջնես այն աղքատութեան վիճակին ուրկէ բարձրացար:

Ձայնին սպառնալիքը բանի տեղ չդրաւ նա: Եւ երբ տուն վերադարձաւ, կնոջն ըսաւ, թէ այլ եւս չպիտի կատարէ այն ստորկական այցելութիւնը: Բայց դժբաղդութիւնն ալ շուտ հասաւ իր վրայ: Առաջին անգամ աղջիկը մեռաւ, առանց զաւկի, ամբողջ հարստութիւնը թողլով ամուսնոյն: Յետոյ եպիսկոպոս որդին երեսէ իյնալով պաշտօնէ ինկաւ:

Վերջապէս, օր մ'ալ սոսկալի հրդեհ մը բոլորովին մոխիր դարձուց իր բոլոր կալուածներն ու հարստութիւններն: Եւ օր մ'ալ տեսաւ որ ուտելու հաց չունէր: Հացկատակ բարեկամները զինքը լքեցին, ու աղքատներու ջնջին գումարով էջ մը գնեց նորէն:

Հիմա ամէն օր անտառ կ'երթայ, եւ իրեն մնացեալ կեանքը դժնդակօրէն գործածելով կ'ապրի, պատժուած իր ապերախտութեան եւ քարասրտութեան պատճառաւ:

Թարգմ. ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԿԱՍԹՈՆ ԲԱՌԻ



ՉԻՆԱԿԱՆ ԱՌԱՅՆԵՐ

Աղէկ գիրք մը առաջին անգամ կարդացած ատեն նոր բարեկամ մը ստացած ըլլալու հաճոյքը կ'զգամ: Երբ արդէն կարդացած գիրք մը նորէն կ'կարդամ, հին բարեկամ մ'է ան զոր նորէն կը տեսնեմ:

— Սպասեմ որ աւելորդ ստակ ունենամ եւ ան ատեն աղքատաց կ'օգնեմ: Եղկելի՛ դու, ո՛չ երբեք պիտի օգնես դու անոնց:





ՓՈԲՐԵԿ ԱՂԱԲՆԵՐ

Ի՞նչ աղւորիկ,
Ես, սիրունիկ,
Այտերդ տնուշ
Նո՞ւզ է Թէ նուշ:

Աչերդ ծաւի,
Նայուածք մ'ունի,
Լուրջ գեղանի,
Ո՞վ Աղաւնի:

Այլ երբ փակես
Կը մըմնչես,
«Յիսուս, Յիսուս,
Մըտի՛ր ծոցս»:

Ամբիծ սուրբ սիրտդ
Առջին փրկչիդ,
Ծխի՛, մխի՛
Նման խունկի:

Շրճներդ նուրբ,
Կ'երգեն «սուրբ, սուրբ»,
Անմեղ ու հեղ
Հրեշտակի պէս:

Եւ այդ երգիդ
Փոխարէն՝ շի՞ծ
Մ'արցունք խլես
Աչքէս, սրտէս...:

Թաթերդ Թօմպուլ,
Ինչո՞ւ անդուլ
Երկինքն ի վեր,
Կ'երկարես վեր:

Աստուած պապո՞ւն
Փընտրուես դուն.
Բայց նա քննէ
Շատ հեռի չէ:

Ուստի սիրով
Ձերմ հաւաքով,
Գրկէ՛, սիրէ՛
Որ, քեզ օրհնէ:

Սըվազ

Թ. Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԷ ՍԵՆԱՍՏԱՆԻՆ

Դպրոց երթալու ճամբուս վրայ սիրուն կանաչներու մէջ սե-
խաստուն մը կը պարզուէր: Իւրաքանչիւր երթիս ու վերադար-
ձիս այդ ցանկապատ սիրուն սեխաստանին մօտիկը Հինգ վայր-
կեան դադար առնելով զգլխիչ տեսարանը կը դիտէի, մանա-
ւախդ հունա կանաչ տերեւներուն մէջէն երեւցող բառական խո-
շորկէկ ու ըստ երեւոյթին ծերութեան սահմանը հասնող սեխ մը,
որուն շողիքս կը վազցնէի, թուքերս կուլ կուտայի: Այս ընթացքս
անդգալապէս ախորժակս գրգռած եւ յանդուգն խորհուրդի մը՝
գողնալու ծնունդ տուած էր: Այս մտածումը մէջտ մտացս մըթ-
նոլորտին վերեւ սաւառնող վարժապետներուս բարի խրատնե-
րուն, «այդ բանը մի՛ ըներ» ի ներքին աղդարարութեան մը

ձայնին վրայ յաղթանակը տարաւ: Որոշումն վերջացած էր, միայն խոփող պահապանին բացակայ ըլլալուն բարեպատեհ առթիւն կ'սպասէի անձկանօք:

Օր մը՝ ըստ սովորութեան ցանկապատին քովիկը կենալով՝ շողիքս կը վազցնէի միշտ, մէկ ակնարկով աչքիս հանդիպող սեխին համար, յիշեցի նաև պահապանին տնակն ալ լրտեսող ակնարկ մը նետել: Խնչ բարեբաղդութիւն, այսօր երջանիկ էի. սեխը պիտի ուտեմ, կը խորհիմ, ինչու որ պահապանը չէր երեւար հոն, որ միշտ արգելք մը եղած էր նպատակիս ու փափաքիս իրագործման: Սեխը ճաշակելու սէրը որքան աւելնար մէջս, այնքան ալ սրտիս զարկը կը բազմապատկուէր: Հոգիս հոն՝ սեխին մօտիկն էր:

Զիս դիտող աչքերէ ազատ ըլլալս անգամ մ'ալ փորձելով՝ նապաստակի մը թեթեւութեամբ ցանկապատէն դէպի պարտէզ ցատկեցի, ակնթարթի մը մէջ փափաքած սեխիս քովը կը գլուխուէի: Ուրախութենէս զգլխած՝ ծնկուրներս կը դողան, սիրտս կը տրոփէ, ակնարկս պահապան ու դիտող կ'որոնէ, մինչ ձեռքս սեխին քանի մ'անգամ այցելութիւն տալէ վերջ, փրցնելով կուրծքիս վրայ կը գամէ: Հազիւ թէ փախչիլ սկսայ, աներեւոյթի մէջէն յանկարծ ծնաւ վախիս ուրուականը, անգութ պահապանը, որ հաստ բիրը սպառնալեօք օդին մէջ ճօճելով դէպ ինձ կուգար: Գերծէէ մը հալածուող նապաստակի մը խեղճ վիճակն ունէի: Ա՛լ երեւակայեցէք թէ ի՛նչ ճգնաժամի մէջ կը գտնուիմ: Տնտնալուծամանակը չէ, կ'ըսեմ իւրովի եւ շանթի արագութեամբ ցանկապատէն դուրս նետուելով, ամայի դաշտը առաջնորդող ճամբան ձեռք կ'առնեմ, Բռնուելու, պատժուելու եւ այնքան դժուարութեամբ ձեռք անցուած անուշիկ սեխը ետ տալու վախը քայլերս թեւ ու թռիչ առած էին եւ թռչունի մը պէս կը սուրայի: Ստէպ ետիս ձգած լրտես ակնարկներուս վերջինն ինձ կ'աւետէ թէ դանդաղ պահապանէն բաւական հեռի կը գտնուիմ. սակայն անոր տեսութենէն իսպառ ազատ ըլլալու համար, ուրախ ու ժպտուն երեւոյթ մ'առած կ'որոշեմ խիտ թուփերու մէջ ապաստանիլ, է՛հ, ա՛լ ազատ եմ հիմա, այլ եւս վախ չունիմ, թէեւ ծնգացս դողն ու սրտիս բաբախումը կը շարունակեն:

Այն սեխին՝ որուն համար քիչ մնաց հոգիս պիտի տայի, ա՛լ իմս եղած էր: Կռուփի հարուածով մը կը փչրեմ ան՝ ու բերնէս, մատներէս անուշահամ ջուրերը վազցնելով՝ կ'սկսիմ անյազաբար ուտել: Այս յանդուգն գործէս վերջ ա՛լ չեմ անցնիր այն ցանկապատին քովէն պահապանին վախէն:

Սիրելի ընկերներս, թէեւ ես նկարագրականիս մէջ դանդաղ պահապանին ձեռքէն մազապուր զերծայ, սակայն իրականին մէջ անկարելի պիտի լինէր ինձ եւ ապահովաբար նաեւ ձեզ, Ուստի ամէն անգամ որ այդպիսի փորձութեանց մատնուիք, լաւ է պարկեշտօրէն պահապանէն կամ տիրոջմէն ուզել (եթէ դրամ՝ չուներք գնելու) քան թէ գողնալու մեղքի մէջ իյնալ: Լա՛ւ գիտցէք որ գողութիւնը իր հետ միշտ շատ փորձանքներ կը բերէ:

Նիքսար

Աշակ. Սուրէնեան վարժ.

ՄԱՐԿՈՍ Թ. ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

Նախորդ քիւով Հանրագիտակի մրցումի արդիւնքն հրատարակելի յետոյ ստացանք քանի մը մրցողներու գրութիւններ, որոց մէջ ամենեւ լաւ յաջողուածն էր Տիարակէիւրէն Պ. Միհրան Պաւստանեանի յղածն, բայց եզրակացութիւնն չէր յարմարած. « Գողութիւնը՝ նոյն իսկ ասեղի մը՝ դասապարտելի է »:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԹԵՐԹԻԿԸ

(ՕՐԱԹԵՐԹ ԵԱԲԱԹՕՐԵԱՅ)

Կը գտնուի Մայրաքաղաքի բոլոր Նպարավանաւորներուն
Մասնավանդակներուն եւ ... Սափրիչներուն ֆով

Պոլսոյ համար տարեկանն է 899 ոսկի

Գաւառներու համար » » 900 »

Հասցէ՝ ԼՈՒՈՒԹԻՒՆԵԱՆ ՈՒՐ ՈՐ ԵՄ

ԾԱՆՈԹ. — Օրաքերք Հանրագիտակ կը հրատարակուի կես գիշերէն վերջ, քախսապիթիներէ եւ փիրէներէ ֆուններնին փախողներուն ի մխիթարութիւն եւ ի ափոփանս:

ՓՈԽԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ԵՐԿՈՒ ԽՕՄԲ

Ես ծնած եմ... 1885ին եւ միտքս դրած եմ դեռ մինչեւ 2005 տարին ապրիլ: Տարբեր խնդիր է երբ Տիկին Մելինէ Լուսթիւնեան բաժնուիլ ուզէ ինձմէ, այն ատեն որոշած եմ մեռնիլ անոր համար միայն: Հայ. Առաքելական Եկեղեցիի զաւակ եմ, Նարեկ կը կարդամ եւ քարոզներ կը սղաղբեմ: Ինձի շատեր ըսած

են թէ յօդուածներս լափելով կը կարդան, չեմ հաւատար, քանի որ եթէ երբէք լափուելիք բաներ մը կան . . . անոնք ալ Հաճիին փիազը եւ թօփիկն են:

Այսչափը կը բաւէ կարծեմ փակելու համար Յառաջաբանս որ Երկու խօսք ըլլալէ աւելի չեմ գիտեր քանի երկու խօսքերու յանգեցան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՆՁ ԿՍՆՑՆԻ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Ասկէ առաջ լսած էի որ աշխարհս ինքն իր վրայ կը դառնայ, պարահանդէսներուն մէջ այր ու կին մէկտեղ կը դառնան, եւ օղի խմողներուն դուխը կը դառնայ, բայց հիմա աշխարհիս մէջ Չէմպլիէնի մաքսապաշտ դրութիւնն է որ կը դառնայ: Բայց ես, կարճատես ըլլալուս, այնչափ հեռուն գտնուող բաները չեմ կրնար որոշել, ասոր իբր դարման Տօքթ. Ակնաբուժին պիտի դիմեմ ակնոց մը առնելու համար: Տակաւին ի՞նչ երկարեմ սա՛ յօդուածս որ կրցաւ ձեզի գաղափար մը տալ իմ հմտութեանս (°) վրայ:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐԸ՝ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՁ

(Յաւելեալ եւ նոխացեալ յօդուած՝ 7½ գօլօնի վրայ)

Ի՞նչ ենք եւ կամ ո՛վ ենք: Սա մեր ազուր, գեղեցիկ, սգեղ, երկայն, հաստ, սեւերով, ճերմակով վարժուհիները ինչո՞ւ կը թափառին փողոցներուն մէջ, ո՞վ ըսաւ քրենց թէ փողոցները մէկ մէկ դպրոց են: Աստուածնիդ սիրէք սիրելի վարժուհիներս, մի պտաիք փողոցները, որովհետեւ ի տես ձեզի իմին դաս առնելու կուգայ փողոցին մէջ նոյն իսկ:

Մնամ յարգանքով ձեր վարժուհի փէշերուն

ԱՂՈՒՈՐ ԽՄԲԱԿԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ

ՀԱՅԸ ԻՆՉՊԷՍ ԿՈՒՏԵՆ

Ես փորձով հաստատած եմ թէ՛ հացը նախ պանիրով կ'ուտուի, շատեր կան որ միտով կ'ուտեն, դասակարգ մըն ալ կայ որ ... օդով կուտէ: Շատ օգտակարութիւն ունի հացը. նախ որ ածան է՝ 35 փարա, և յետոյ ստամոքսը կը լեցնէ պէտք եւ ածին պէս: Ծամեցէք հացը, առանց ծամելու չուտուիր, և եթէ չծամէք՝ ես չեմ խառնուիր, վերջէն դժուարամարսութեան կ'ենթարկուիք, և դժուարամարսութիւնը այնչափ յանձնարարելի բան մը չէ:

Մ. Ն. ԲԱԳԷՏ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ օր Բարիզի մէջ երկու աղջիկ կառքով մինչեւ Պուատը-Պուլօներ գացին եւ մենամարտեցան: Երկուքին մէկը անպատճառ վիրաւորուած է կրսէ Զինական Եռ-Հոմ-Զին լրագիրը:

— Երկուշաբթի օր Մ. Լըպոտիի անապատին մէջ 12 մահ պատահեր է եւ 182 ծնունդ: Ամուսնութիւնները շատ զարմանալի են. էրիկ կնիկ մէկտեղ կը պսակուին եղեր, և ասիկա, կըսեն Լըպոտիի մայրաքաղաքին թերթերը, շատ զարմանալի, նմանը չտեսնուած բան մըն է:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Աժանս տը ... Միժա

Բարիզ, Դեկտմ 32. — Մէկ մէկ ալ՝ երկու կ'ընէ կ'ըսեն քանի մը ակադեմականներ:

Լոնսոն. — Լորտ Զէմպըրլէն երէկ գիշեր ժամը 5ին քնացաւ և 6ին ճաչեց:

Բեքին. — Կռփամարտիկներէն մէկը փողոցին մէջ յանկարծամահ եղաւ: Մանրամասնութիւնք յաջորդ թիւով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՐՕՆԻԿ

Խարբերդ Տ. Խ. քահանան ժամը 4½ին 68 տարեկան հասակը մտաւ: Մօրուքը ճերմկած է կըսեն:

Վաղը Դատ. Խորհուրդը նիստ պիտէ գումարէ ճարճատուն

վառարանի մը շուրջը, նիստը երկար պիտի տեւէ :

Տ. Ս. քահանան հիւանդ է, վարժուհի մը քովը կը հսկէ հիւանդապահութեան համար :

ՕՐՈՒԱՆ ԴԵՊԲԵՐ

Երեկ երկու կառք իրարու ընդհարեցան, մէկուն անիւը կոտրեցաւ, միւսին ալ կառապանին ոտքը : Տէրը բժշկութիւն պարգեւէ :

— Ն. անուն գինով մը երէկ փողոցին մէջ պառկած, փորձով կը չափէր գետնին երկայնքը և լայնքը :

ԱՐՏԱՍՈՎՈՐ ՄԲՅՈՒՄ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԹԵՐԹԻՒՆ

Բացառիկ Պարգեւ՝ ՆՈՒՊԱՐԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ մը

Հաւր հաւկիթէ՞ն ելաւ, թէ հաւկիթը հաւէն : Ինչո՞ւ ելաւ եւ ինչո՞ւ չելաւ » :

Այսօրուան թերթը լինցաւ

Սպասեցէք վաղուան թիւին՝ որ

Աղով, պղպեղով եւ սալձայով պիտի շինուի

Խմբագիր Տնօրէն


ԲԱՆԱԳՈՂ ԼՈՒԹԻՒՆԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

ԶԱՌԻՎԱՐԷՆ ՎԵՐ ԵԼԼՈՂ ԱՆԻԻԸ

Ահա պզտիկ փորձ մը, որ մարմիններուն ծանրութեան վրայ մեր գիտցած բոլոր օրէնքներուն հակառակ կ'երեւի :

Խաւաքարտէ չըջանակ մը շինեցէք, որուն մէջ փակցուցէք մետաղեայ կոճակ մը եւ կամ քիչ մը կնքամոմ, դրէք ծուռ մակարդակի մը վրայ, այնպէս որ յաւելուածական ծանրութիւնը վերի կողմը գայ՝ քիչ մը դէպի մակարդակին բարձր կողմը նայող դիրքի մը մէջ, ինչպէս կը ցուցնէ մեր պատկերն : Երբ չըջանակը ինքնիրեն թողուք, պիտի տեսնէք որ զառիվերն ի վեր կ'ելլէ՝ կո-



ճակին ծանրութեան ազդեցութիւնով: Սոյն փորձին հանդիսա-
տեսներուն զպիմանքը գրգռելու համար գոց կէոր տուփ մը գոր-
ծածեցէք, անանկ որ աւելցուցած ծանրութիւննիդ բնաւ չտխա-
նուիր:

ՄՏԱՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

ԲԱԿԼԱՅՈՎ, ԿԱՐԿԱՆԴԱԿԸ

Կաղանդի օրը շատ մը գաւառներու մէջ սովորութիւն կայ
կարկանդակ մը բերել սեղան, որու խմորին մէջ եփելէ առաջ
դրուած է աասը փարանոց մը կամ բակլայ մը:

Ասանկ տօնի օր մը՝ չորս ընկեր ու ես (հինգ հոգի) կարկան-
դակ մը ձեռք ձգեցինք եւ որոշեցինք որ բակլան որու որ ելլէ՝
անիկա օրուան բոլոր ծախքերը վճարէ:

Կարկանդակնիս ճիշդ քառակուսիի մը ձեւն ունէր. սկզբնք
խորհիլ թէ ի՞նչպէս կարելի է զայն հինգ հոգիի մէջ հաւասարա-
պէս բաժնել: Ընկերներէք մին բաւ:

« Դանակով մը չորս անգամ շիւղակ կտրեցէք կարկանդակն, ա-
նանկ ու ամբողջը ինը կտրուեալ բաժնուի. եթէ կտրուեալ երկու առ
երկու իրար բերե՛ք՝ կ'ունենանք ճիշդ քառակուսիներ՝ որոնք իրարու
հաւասար են:

Եւ իրաւ ալ ըսածին պէս կարկանդակը հինգ հաւասար մա-
սերու բաժնուեցաւ:

Խնդիր չէ թէ՛ սիրելի ընթերցող, մենէ ո՞վ գտաւ բակլան և
կորսնցուց գրաւը, մինչակ պիտի հարցնէի ձեզի թէ՛ դուք ալ կրե-
նա՞ք ընկերոջս պէս քառակուսի մը հինգ հաւասար քառակուսի-
ներու բաժնել:

Տպագրիչ եւ Հրատարակիչ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻԴՏԱՄ ԼԲԱԳՐԻ ԴԷՄ


Գաւառները գլխաւոր քաղաքներու մէջ ընդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակ գործեր ունեցող, եւ կամ ո՛ր եւ է դրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին ապսպրանքները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նամակի եւ այլ կորուստներէ. եւ ինչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յառաջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Գաւառներու մէջ Հանրագիտակի Մեծ. Գործակալներու դիմողները կրնան սա առաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ առ կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ՛ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենան իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ:

Օրինակի համար, եթէ Ամասիայի կամ շրջականերէն մէկն ուզէ ժողովրդական Տարեցոյց մը գնել, Հանրագիտակի բաժանորդագրուիլ, այցաքարթ մը, նամակի անթէթներ, փոխանակագրի տետրակներ, ինչպէս նաեւ զաւազան հեղինակներու պատկանող գրքերէն ունենալ, փոխանակ չորս հինգ տեղեր նամակ գրելու, աւելի լաւ կ'ընէ եթէ դիմէ ուղղակի Մեծ. Հայկազուն էֆ. Խանդամանրի եւ տասը վայրկեանի տեսակցութեան մը մէջ ամէն ուզածը յայտնելը վերջ հանդարտօրէն իր գործին կը նայի, վստահ ըլլալով որ իր յանձնարարութիւնները կէտ առ կէտ եւ կարելի եղածին չափ փութով կը կատարուին եւ իրեն կը յանձնուին Մեծ. Հայկազուն էֆ. Խանդամանրի միջոցաւ:

Այս կերպով գրենական ու տպագրական գործերու մէջ ամէն տեսակ դիւրութիւն կրնան վայելել անոնք որ մեր ներկայացուցիչ ունեցած քաղաքներու մէջ կամ անոնց շրջակայները կը գրտնուին:

Մեր Մեծ. Գործակալներուն և Հանրագիտակի բաժանորդագրութեան պայմաններու մասին տեսէք հետեւեալ էջն:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՄԲԱԹԱԹԵՐԹ

Նոր տարին սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 18-20 էջէ բաղկացեալ:

Վեցամսեայ ու յոսամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր, ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆԷ

Պոլսոյ համար

30 ղրուշ

Գաւառաց

35 >

Արտասահման

45 >

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղ պաղեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլէրեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ւ, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեփրսալ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսաւրիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւրիւն, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Նիսսար, Յովհաննէս Էմ. Բէլքեֆեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր Դ. Է. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Քարակալուրեան և Ընկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան
Տիւրքմէն, Լեւոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆ

1844

1844

1844

1844

1844

1844

1844

1844

1844

1844

1844

1844

1844

1844

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ամէնէն ժողովրդական, Ամէնէն Զուարճալի

Ե Ի

ԱՄԷՆԷՆ ՇԱՏ ԾԱԽՈՒԱԾ ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՅՈՂ

ԿԸ ՊԱՐՈՒՆ ԱԿԷ

ԽճԷ Բօնետը. — Ագահութիւն. — Պարահանդէտը ինը տարի առաջ
(Բանագող Լուսինեան). — Հագարումէկ կերպեր ժամը գիտնալու. —
Պատմութիւն մը. — Աշխարհիս վախճանը. — Թէ ինչո՞ւ եւ չեմ յա-
ջողիր (Քասիմ). — Հարց-Պատասխան (Յ. Հոնեան). — Անխտեմ հար-
ցումներ, Կնոջ հարցումներ (Ա. Փանոսեան). — Տիկին Մաք Ուրերնս
եւ կայծակը. — Բաւն եւ ... դարս ճաշ մը. — Կրօններու պատմու-
թիւնը. — Այծեամի որսը. — Հարսի մը պատրանքը (Քասիմ). — Աշ-
խարհիս վրայ միայն կենալու տեղ. — Նշանուոր միականիներ. —
Մխիթարական բուրձ յոռեան բարեկամիս (Քասիմ). — Նրկրագործա-
կան Պատառիկներ. — Օգտակար գիտելիքներ. — Յաւին դարձանը. —
Աշխարհիս նախնական վիճակները. — Աչքերու առողջութիւնը. — Ա-
կամայ գիւղացի (Յ. Պարոնեան). — Ժամացոյց մը գոնող պարունը. —
Տոմսակներդ, պարունայք. — Հինգ առ հարիւր տոկոս. — Նամակա-
ղբոջմի լեզուն. — Զուարճալի դատաւան. — Թօթ. — Բարնիշոնի
երագը. — Մեղրալուսնի նամբորդութիւն. — Մայր ու աղայ. —
ԱԿՆՅԻ ՍԱՐԱՅ ՄԸ. — Դիւղերու համար. — Դրամագլուխ եւ
Աշխատութիւն. — Կեռասներին. — Բաւն բարոյով աշխարհիս ոսկին.
— ԹԻՐԸՍԹՆԵՐԸ. — Ծխախոտի մշակութիւնը. — Հարիւրաւոր Առաժ-
ներ ու ԶՈՒՍԻՃԱԼԻԲՆԵՐ եւայլն, եւայլն.

Դիմն է 5 Դահեկան. — Դաւառներ՝ թղթատարով 6 Դահեկան

Հանրագիտակի բոլոր Դորձակալներու հով

Ուղղակի մենէ հինգ հաս զնոցներուն վեցերորդ մը նուէր կը տուի

